

ՄԵԼԻԿ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐԱԳՐԱՐԱՆԻ ԲՐՆՈՒՆԻ

Տարեկան գինը 10 ռուբլի է և տարվանը 6 ռուբլի
Առանձին համարները 5 կոպեկով
Թիֆլիսում գրվում են խմբագրատան մէջ
Մեր հասցեն. Тифлисъ, Редакция „Мшакъ“.
Կամ Tiflis, Rédaction „Mschak“.
Տ է Լ Է Ֆ օ Ն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերէից)
Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով
Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր տողատեղին 10 կոպեկով
Տ է Լ Է Ֆ օ Ն № 253.

«ՄԵԼԻԿ» ԼՐԱՅԻՐԸ

Յուլիսի 1-ից մինչև տարվայ վերջը
կարժենայ ՎԵՑ ռուբլի:

Դիմել Тифлисъ, редакция „Мшакъ“.

Այն անձինք, որոնք վճարել են մինչև
յուլիսի 1-ը և ցանկանում են շարունակել
լրագիր ստանալը, թող հող տանեն վա-
ղորօք յայտնելու այդ մասին խմբագրու-
թեանը, որպէս զի լրագրի առաքումը
չընդհատվի:

Մէկ ամսով բաժանորդ գրվել ցան-
կացողները վճարում են ՄԷՅ ռուբլի:

Ապագիկ բաժանորդագրութիւն չէ ըն-
դունվում:

ԲՈՎԱՆԻՆԻՍՏԻԿ

Մի գանգաղի առիթով.—Ներքին ՏԵՍՈՒ-
ԹԻԻՆ. Մամուլ. Մատենագրութիւն. Ներքին
լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻԻՆ. Պատերազ-
մի շուրջը. Նամակ Իտալիայից. Արտաքին
լուրեր. ՀեՌԱԳԻՐՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՆ-
ՆԵՐ.

ՄԻ ԳԱՆԳԱՍԻ ԱՌԻԹՈՎ

Այս ամառ էլ այցելութեան եկան մեր
երկիրը թէ՛ ճանապարհորդներ և թէ՛
գաղութական աշակերտների խմբեր: Ար-
վում է, որ դարձեալ պէտք է գտն նոր
խմբեր մեր երկրի հետ ծանօթանալու
համար:

Ինքն ըստ ինքեան մեր երկիրը իր
լեռներով, ձորերով, հանքերով, ջրերով,
նաւթիւններով այնքան աչքի ընկնող մի
տեղ է, որ զբոսանքներ կատարողների
մի մասը հէնց բաւականանում է այն
տպաւորութիւններով, որ նա ստանում է
անմիջական գիտողութեամբ: Բայց ճա-
նապարհորդների մեծագոյն մասը ցանկա-
նում է աւելի հանգամանորէն ծանօթա-
նալ իր այցելած տեղերի և առհասարակ
մեր երկրի հետ: Եւ սակայն նա չէ գտ-
նում իր ցանկացածը:

Մենք առիթ ունեցանք լսել ճանապար-
հորդների գանգաղները այն գծաւորու-
թիւնների մասին, որոնց հանդիպում են
նրանք մեր երկրի հետ ծանօթանալու
գործում: Մենք մի կողմի ենք թողնում
այն անյարմարութիւնները, որոնք հանդէս
են գալիս ուղևորների առաջ ամեն մի
քայլում թէ՛ իշխանատեղ գտնելու և թէ՛
ձիեր ու կառքեր որդեգրելու ժամանակ:
Ենթոյն այդ անյարմարութիւնների ճա-
նապարհորդական խմբերը չեն հեռանում
մեծ ճանապարհներից և չեն թափանցում
գէտի երկրի խորքերը: Նրանք բաւակա-
նանում են միայն մի քանի դիւրամատ-
չելի տեղեր այցելելով, յետաձգելով ման-
րամասն ճանապարհորդութիւնը մի ուրիշ
ժամանակի կամ առ միշտ:

Բայց մի բան, որ վշտացնում է ճա-
նապարհորդներին և որի հետ նրանք
հաշտվել չեն կարողանում, այդ այն է,
որ նոյն իսկ այն սահմանափակ ասպա-
րիզում, ուր կատարվում են ներկայ ճա-
նապարհորդութիւնները, նրանք չեն կա-
րողանում գտնել ոչ բաւականաչափ հը-
մուտ զեկավարներ և ոչ փոքր ի շատէ
լիակատար ուղեցույց-գրքեր, որոնց միջո-
ցով նրանք տեղեկութիւն ստանային ի-
րանց տեսած լեռների, գիւղերի, գործա-
րանքների, հնութիւնների և ժողովուրդների
մասին:

Նոր չեն այդ գանգաղները, բայց այժմ,
երբ մեր երկրի այցելուները շատացել
են, նրանք լսվում են օրէցօր աւելի ու աւել-
ի յաճախ: Եւ որքան ցաւալի է, որ այդ
գանգաղները չեն կարողացել այնքան
նախաձեռնութիւն զարթեցնել, որ գտնե-
լէին անձինք և բաւարարութիւն տային

մի համակրելի պահանջի, որի նպատակն
է ծանօթանալ մեր երկրի և նրա քնա-
կիչների հետ:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՆ

Մ Ա Մ Ո Ւ Լ

Մամուլը մեծ, հսկայական ոյժ է, շարունակ
լսում ենք մեր ամեն կողմից: Մենք կասենք,
ոչ ամեն մամուլ. միթէ մեծ, լրագրական ոյժ
է թիւրքական մամուլը: Ոյժ է այն մամուլը,
որ գիտէ միշտ ճշմարտութիւն խօսել, եթէ
այդ ճշմարտութիւնը նոյն իսկ անախորժ լինի
իր աղբայրական ինքնասիրութեան համար:
«Ճշմարտութիւնը ամեն բանից վեր» դա-
ւանող մամուլը միայն կարող է հսկայական
ոյժ հանդիսանալ: Դրան մի նոր ապացոյց
տուեց անգլիական մամուլը Կրեւելէրի մահվան
առիթով:

Ոչ մի մարդ այնքան ահագին ֆլաւներ, թէ
նախկին և թէ բարոյական, չէ հասցրեց
Անգլիային, որքան Կրեւելէրը և սակայն անգ-
լիական մամուլը իր մէջ ոյժ գտաւ գնահատե-
լու հանգուցեալի գործունէութիւնը այնպէս,
ինչպէս պէտք է գնահատել ամեն մի անա-
շտ, անկողմնակալ և արդարադատ մարդ:

Առաջ բերենք երկու լրագրի կարծիքը:
«Daily Graphic» ոգևորված խօսում է հանգու-
ցեալ հերոսի մասին այսպէս.

Պօլ Կրեւելէրի մահվամբ վերջացաւ մի ասպարէզ,
որ նապօրէնեան ընտանիքի մահն ունէր: Նա մի երե-
ւելի մարդ էր և թէ՛ նրան չափովեց գտնաւ հա-
րաւային Աֆրիկայի Վաշինգտոն, այնուամենայնիւ,
չստ շուտ չի մոռացվել, որ նա ստեղծեց մի հզօր
պետութիւն, որ նա կուէց Մեծ-Բրիտանիայի հետ և
յաղթվեց միայն մեր կողմից գործադրված այնպիսի
շանքերից և զոհերից յետոյ, որոնց նմանը չէ կայ
Անգլիայի պատմութեան մէջ: Նա ցնցեց բրիտանա-
կան կայսրութեան գործելիքը այնպէս, որպէս չեն
ցնցել ամբիկալան յեղափոխութեան ժամանակից
ի վեր: Նրա 80,000 զինվորների կոնք կապրել
պատմութեան մէջ, իբրեւ պատերազմական ամենա-
նշանաւոր գործողութիւններից մինը: Բաւական է
յիշել, որ նրան յաղթելու համար Անգլիան ստիպվեց
գաւտ ուղարկել նրա գէտ մի բաւոր միլիոն
զօրք և իր ազգային պարտքին աւելացնել 200,000,000
ֆունտ ստերլինգ նոր պարտք:

Մի այլ տեղ, նոյն լրագիրը ասում է. «Տը-
բանական և Անգլիայի կաւի մէջ երկուսն ևս
իրաւունք ունէին և ամեն մի անգլիացի զգում
է, որ Կրեւելէրի տեղ ինքն ևս այնպէս կը վար-
վէր, ինչպէս նա: Կրեւելէրը կատարեց աշխար-
հում մեծ գործեր և, անկասկած, խոշոր տեղ
կը գրաւէ պատմութեան մէջ»:

Տեսնենք ինչ է ասում «Times» լրագիրը,
Կրեւելէրի ամենատիեթիմ և անհաշտ հակառա-
կորդներից մինը, ինչպէս է գնահատում նա
այն մարդու գործունէութիւնը, որի կեանքի
միակ նպատակն էր կոնք Անգլիայի դէմ:
«Անգլիան, ասում է պահպանողական թեր-
թը, գիտէ գնահատել անձնաւորութեան ոյ-
ժը, ուստի և խորին համակրութեամբ կը լսէ
այն աքաղաղի վշտալի մահվան լուրը, որ
համակրութիւն յարեցրեց դէպի իրան նոյն
իսկ իր թշնամիների մէջ անխախտ վճռակա-
նութեան զօրութեամբ, իր խիստ շիտակու-
թեամբ և քաջութեամբ»:

Միւս լրագիրները ևս միատեսակ գովաասն-
քով գրումատում են Անգլիայի թշնամու յատ-
կութիւնները և խոնարհեցնում են իրանց
զրուհները յարգանքով նրա դագաղի առաջ,
իբրև մի նշանաւոր հերոսի:

Իտալական և Ֆրանսիական լրագիրները օ-
գուտ քաղցրին մի նոր առիթից աւելի չեմ,
մտերիմ և սերտ յարաբերութիւններ ստեղծելու
երկու լատինական երկրների մէջ: Այս յու-
լիսի 7 (20-ին) լրացաւ նշանաւոր բանաստեղծ
Ֆրանչէսկօ Պետրարկի ծննդեան վեցհարիւրա-
միակը (1304—1904) և երկու երկրների մա-
մուլը ու գրական աշխարհները մեծ շրջով տօնե-
ցին այդ յիշատակը: Պետրարկան գրել է մի մեծ
լատինական պօէմա «Աֆրիկա» վերնագրով,
որով գրումատել է Սցիպիոն աւագին, բայց
դրա համար չէ, որ նա ստացել է մեծ բանա-

ստեղծի անունը: Ոչ, այդ նրա անունը անմա-
հացել է իտալական այն սօնէտների պատճա-
ռով, որոնց մէջ նա երգում է իր Լաու-
րային և որոնցից ամենագեղեցիկն է «Italo-
mio» (Իմ Իտալիա) սօնէտը. նրա անու-
նը անմահացել է այն պատճառով, որ նա
առաջին հումանիստն եղաւ, մինը այն առա-
ջին մարգկանցից, որոնց մէջ վառ և պայ-
ծառ կերպով արտայայտվեց կուլտուրական
այն յեղաշրջումը, որի վախճանական արդիւնքն
եղաւ Յուրօպայի նոր աշխարհայեացքը, վերա-
ծնութիւնը: Այո, արդար է, երբ նրան ա-
նուանում են առաջին հումանիստ, որովհետեւ
մինչև Պետրարկան չէր կար այնպիսի բուն
շահագրգռումը դէպի անտիքական կուլտուրան,
գրականութիւնը և նա եղաւ, որ գրեցեց այդ
նկատարները, նա վերածնութեան կարա-
պետն հանդիսացաւ և, որովհետեւ նրա գործով
ամենից շատ օգտվեցին երկու լատինական
երկրներ—Իտալիան և Ֆրանսիան, ուստի և
նրանք այսօր երախտագիտաբար տօնեցին
նրա յիշատակը և մեծ բանաստեղծի անունը
դարձաւ օղակ աւելի սերտ միութեան, եղ-
բայականութեան երկու աղբերի մէջ:

Մ Ա Տ Ե Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Ի Ն

Մաքս Նօրդաու. «Հայրենասէր Իտալացին» Թարգ-
մանութիւն Ա. Բաբայանի, Քէնթոն, «Փարոս» տպա-
րան, գինն է 10 շահ—կօպէկ

Մի փոքրիկ պատմութեամբ է 18 փոքրաթիւ
երեսներէ բաղկացած այս գրքիկի նիւթը:
Մի իտալուհի պարծանքով պատմում է, որ
իր ամուսինը՝ դեռ նշանած ժամանակ ծխում
էր: Իտալուհին չէր սիրում ծխախոտի հոտը,
նա ատելով ասում էր ծխողներին: Նա պա-
ման է գնում իր նշանածին—կամ ինձանից
ձեռք վեր առ, կամ ծխելը թող: Երիտասարդ
օֆիցէրը սիրում է նշանածին. նա տանջվում,
գեղեցիկում է այդ պայմանի դիմաց, հալ ու
մաշ է լինում... բայց ծխելն այնպիսի խիտ է
նրա համար, որից նա ձեռք վերցնել չէ կա-
րող:

Բայց գալիս են աւստրիական բռնակալու-
թեան օրերը 1848-ի յեղափոխութեան անա-
շտ փորձից յետոյ: Աւստրիան ծխախոտի մե-
նավաճառութիւն է մտցնում, որ եկամուտն
աւելացնէ: Իտալացի բոյոստ ևս սարքում
գրա դէմ. նրանք վճռում են կառավարու-
թեանը ֆլաւել—նրա եկամուտը պակասեցնել:
Եւ անա կայանում է մի վճիռ—«չը ծխել»:
Եւ, ի վերջոյ, այն ինչ չը կարողացաւ ա-
նել տալ նշանածի անհուն սէրը, դիւրու-
թեամբ արեց հայրենիքի վառ սէրը. երիտա-
սարդ օֆիցէրը թողեց ծխելը:

Պատմութեամբ գրված է Մաքս Նօրդաուի
համաշխարհային յարգանք վայելող գրչին
յատուկ ուժով:

Հայրենի Թարգմանութիւնը բաւարար է:
Երևում է, որ շտապով է կատարված, եթէ
ոչ չէին մտնի նրա մէջ այսպիսի
բառաձեւեր ու նախադասութիւններ. «Մէրը
քանի քանի մարդկանց է ոգևորել և խրախու-
սել հերոսական գործեր կատարելու և ինք-
նագոհութեան տարեղ քան թէ հայրենասիրու-
թիւնը», «բայց որովհետեւ ես ձեզ աւելի հումա-
րիս եմ» սիրում... և այլն:

Չը նայելով լեզուական այդ մանր անհար-
թութիւններին, Վերմապէս յանձնարարում ենք
այդ սիրուն պատմութեամբ ընթերցանութիւնը:
Խաժակ

ՆԵՐՔԻՆ ԼԱԻՐԵՐ

Անդրկովկասեան երկաթուղիների վարչու-
թիւնը արտահանական կամէքա է ուղարկել
Բագու, Հաջիկաբուլ և Երևան—տեղական բը-
ժիկների տրամադրութեան տակ դնելով այդ
գործընթացը:

Կովկասեան երկաթուղիների առաջ բժիշկը
կարգադրել է, որ իռլոյն կարգ ու կանօնի
բերեն երկաթուղիների բոլոր կայարանների

դեղատները և նրանցում պատրաստի ունենան
բաւարար քանակութիւնով դեղեր, մանաւանդ
ախտահանական միջոցներ:

Մեզ յայտնում են, որ Դարմաշտադի հայ
ուսանողութիւնը անա 2 տարի է հիմնել է մի
ուսանողական գրադարան, որի նպատակն է
դիւրութիւն և միջոց տալ հայ կեանքով ու
գրականութիւնով հետաքրքրվողներին աղբեր-
ներ ձեռք բերելու: Այդ նպատակով գրադա-
րանն արդէն ունի հայ և օտար լեզուներով
հրատարակված գրքերի մի համեմատ թիւ, որի
գրացուցակն ուղարկում են բոլոր ցանկա-
ցողներին արտասանմանով: Դարմաշտադի
ուսանողները յոյս են տածում, որ կը գտնվեն
անձեր ու հիմնարկութիւններ, որոնք թէ՛ դրա-
մով և թէ՛ գրքերով (հայ և օտար լեզուներով)
կօզնեն իրանց այդ օղտակար ձեռնարկութեա-
նը: Հասցէն հետեւեալն է. Германия, Stud. T.
Melik-Schahnasaryanz, Darmstadt, Alicestr.
№ 1:

Թիֆլիսի արհեստաւորների աւագը համ-
բարներին պետերին առաջարկեց կազմել ընդ-
հանուր ժողով, որը պէտք է ընտրէ մի
յատուկ յանձնաժողով Թիֆլիս բաղաբի ար-
հեստաւորական չէմբերը սանիտարական տե-
սակէտից բնեկու համար:

Ռուսական Թատրօնական ընկերութեան
գրասենեակը տեղեկագրեց Տօմսկի գրամատիա-
կան ընկերութեան վարչութեանը, որ Գօրկու
«На Днѣ» պիեսը այժմ արգելվում է ներկա-
յացնել:

Թիֆլիսի դեղերի պահեստատները ստանում
են ամեն օր անագին պատէշներ Կովկասի
գանազան բաղադրներից արտահանական մի-
ջոցներ ուղարկելու համար: Դրանց գները
15—20% թանգացել են:

Թիֆլիսի բաղադրային սուր-վարակիչ հիւան-
դութիւնների հիւանդանոցի կառավարիչ բժիշկ
Դուլուկեանը անցեալ օրը հաղորդեց բաղադր
սանիտարական-բժշկական տեսչին, որ ինքն
արդէն պատրաստել է մի կրկնակի բարակ
խօշերայով վարակված հիւանդներին տեղաւո-
րելու համար, եթէ խօշերան ոտ դնէ մեր բա-
ղադր: Բարակը խիստ արտասանութեան է
ենթարկված և կազմված է երկու բաժնից—
կանանց և տղամարդկանց համար՝ ամեն մէ-
կում 10 մահճակալ: Կարիքը ստիպած դէպ-
քում կարելի է կրկին 3 բարակ յատկացնել
այդ նպատակին, նոյնպէս և յարմարեցնել բա-
ղադրային 2 սպաստանները իբր ժամանակա-
ւոր հիւանդանոցներ:

Ս և Վ ա տ օ պ օ լ ի պաշտպանութեան 50-ա-
մեակի առիթով կազմակերպվող անագին պա-
նօրամայի աշխատանքները վերջանում են:
Սեկստապօլ է եկել նկարիչ Բուբոն, որը
պատրաստում էր պանօրամայի պատկերներնե-
րը Միւնխենում. նա ինքն է ուղղում կազմել
պանօրամայի ֆօնը:

Մեզ ուղարկված է Չվիցերիայի Լօզան քա-
ղաքում ներկայ յուլիսի վերջից հրատարակ-
վել սկսող մի նոր գիտական ամսագրի յայ-
տարարութիւնը: Խմբագիր լինելու է նոյն
բաղաբի Հայկազեան վարժարանի տնօրէն՝
գիտութիւնների դօքտօր Մ. Նաբանդեանը:
Ամսագիրը լինելու է «չեղօրէն պատկերա-
գրգված»: Խմբագրութիւնը խոստանում է
բոլոր բնագիտական առարկաներին, արհեստա-
գիտութեան, գիւղատնտեսութեան, մանկա-
վարժութեան և «կարգ մը» ուրիշ գիտու-
թիւնների մասին լայնագրակա յուրջ յօ-
դուածները տալ: Ամսագիրն ունենալու է—անդ-
քան անագին ու մեծագոյն ծրագրով—միայն
32 երես... Բաժանորդագիրը տարեկան 12
ֆրանկ, 5 ռուբլի կամ 2 1/2 ղօլար է:

Էջմիածնի տպարանից նոր յոյս տեսաւ Յ.

են: Երկու կողմերն ևս մնացին իրանց տեղե-
րում:

Ձեռքի (Քեյսեր): «Մեյնլանդ» կրեյսերը
եկա՝ այստեղ և անյապող գնաց, երբ լոցմա-
նը ափ տարվեց: Կարծում են, որ «Մեյնլանդ»
երթնեկում է մոտականերում:

Արի (Քեյսեր): Ժամանակ «Peninsular O-
riental Company» ընկերության «Մարմորա»
շոգենավը, որի վրա են տեղափոխված «Պե-
տերբուրգ» ձերբակալած «Մարակկայի» ձա-
նապարհորդները: Մի քանի ճանապարհորդներ
յայտնեցին, որ «Մարակկայի» նաւապետն
անբաւական է ուստ օֆիցէրներէջ: Նաւապետի
բողոքները պատճառով, «Մեյնլանդ» ուղարկ-
վեց մի ժողովին օֆիցէր «Մարակկայի» վրա
և վերջինի հրամանատարութիւնով նաւը գնաց
Սուէ: Ուստ օֆիցէրները քաղաքավարի էին
և պարզեցին, որ «Մարակկան» ձերբակալած
է նրա վրան եղած մեծաքանակ պաշտօնիկ
ներթերի պատճառով: Օֆիցէրները խօսքերի
համաձայն, կապակածի է երևում, թէ արդեօք
խակապէս բերի այդ մասը ուղարկվում է ցոյց
տրված նաւահանգիստը, և աւելացրին, որ
եթէ ուրիշ նաւեր էլ կը բռնվին նոյն քանա-
կութեամբ ուղարկւան պաշտօնիկներով, ջրատոյդ
կարվեն, որովհետեւ բաւարար կ'օժանդակ չու-
նին ընդնած նաւերին պահանջան լինելու և
ուղեկցելու համար: Նաւերը Սուէց հասնելուց
յետոյ, ուստներն արգելեցին «Մարակկայի»
նաւապետին յարաբերութեան մասնէլ բրիտա-
նական հիւպատոսի հետ, սպանաւորով բան-
տարկել: «Պետերբուրգ» և «Մեյնլանդ» հզօ-
րապէս զինված են. իւրաքանչիւրն ունի 5-ա-
կիքի խոշոր թնդանթներ, բացի բազմաթիւ
միջնորդներէ: Նրանց ուղեկցում են 2 ականա-
նաւեր:

Ձեռքի (Քեյսեր): Դառնիք եկած ջոկան
հաղորդում է, որ անցեալ գիշեր իւրաքանակ
նաւատորմը՝ 20 նաւեր և 30 ականակիրներէջ
կազմված 3 ժամ շարունակ ուղարկուած էր
Պետերբուրգ: Մարտիկները պատասխա-
նալով էին: Հիւպատոսներն են, որ եւրոպական
ծովային գործող ուժերն զգալի կերպով նուա-
զել են պատերազմի սկզբից մինչև այժմ:

ՇԱՆՔԱՅ (Քեյսեր): Հաղորդում են, որ
գործերը հիւսիսային Կորէայում տանջվում են
ծաղկեց և բերելներէջ:

ՊՐՏԱՍՏԻՆ (Քեյսեր): «Ալանդիայից»
արգելք վերցրին Կոստանտնուպոլիսէ: Հրա-
ցանները և փամփուռները կը մնան մաք-
րատնային: Շոգենաւն սպասում է տիրոջ կար-
գադրութեանը:

ՄՕԴԻԼԻՆ (Քեյսեր): «Էլի Բոսնիկ» Կո-
բուի բանակում եղող թղթակիցը հաղորդում
է, որ չըջակայրում ամենայն օր տեղի են ու-
նենում ընդհարումներ:

ԻՆԿՈՒՆ (Քեյսեր): Դաշնից օտի մօտ կա-
տաղի ճակատամարտ եղաւ: Շոտլենդներն ու-
նէր 20 բաւալիսն հետևակ, մէկ բրիգադ
թուղանթածիք և մէկ զինվորական կազակ: Դա-
շնի հիւսիսային կողմից յուլիսի 11-ին լըս-
վում էր ուժեղ թնդանթածիքներէ, որը վե-
րանորոգվեց և յուլիսի 12-ին: Ենթադրվում
է, որ ուստները իրանց ուժերը բաշտում են
եւրոպականներին շուրջը, որոնց գերքերի վրա
բազմաթիւ ուստներ են արձակել:

ՄՕՆԶԵԿՈՒՆ (Քեյսեր): Յուլիսի 11-ի ա-
ռաւոտեան ուստական մէկ զինվորական Կոստան-
տուպոլիսի հրամանատարութեամբ սկսեց յարձա-
կումը եւրոպականներին վրա: Դաշնից օտից ա-
րեւելք եղած մի լեռնային վայրում, Ռուսներն
հետեւ խփող ամենասոսկալի կրակ բաց արին
եւրոպական գերքերի վրա: Դրեքերի բարձ-
րութեան պատճառով, եւրոպականներին զգա-
լի ֆաւս է հասել: Կէսօրին եկան ուստական
նոր թնդանթներ էլ, և թնդանթածիքները
շարունակվեց 2 ժամ ևս, որից յետոյ յարձակ-
վողները յետ բաշկեցին դէպի իրանց յենա-
կետը:

ՍԷՆԻՆ (Քեյսեր): Կորէայում եւրոպացի-
ներին ազատ հողաբաժիններ տալու դէմ ապի-
տացիան լուրջ կերպարանք է ընդունում: Ա-
մենայն օր միտինգներ են հաւաքում, որոնց
ներկայ են լինում հազարներ: Սեյու եկած
կապալաւորները միտնում են ագիտացիային:
Հաւատարմութեան, որ ֆրանսիական միտնորը
պէտք է բողոքէ կայսրին եւրոպացիներին պա-
հանջներ դէմ: Յուլիսի 11-ին եւրոպացի-
ները մի կողմ հրատարակեցին, որով յայտարա-
րում են, որ իրանց են սեփականացնում ու-
տիկանութեան իրաւունքն այն բոլոր գործե-
րում, որոնք վերաբերում են եւրոպական շա-
հերին: Հակաեւրոպական բնաւորութիւն կրող
հաւաքումները թոյլ չեն տրվելու, հակաեւրո-
պական պրօպագանդայի աճելու պատճառով:

ՆԻԿՈՒՆԵՎ: Նիկոլայեւեան զավթում շինված
«Կապուլ» նոր կրեյսերի մեխանիզմի փորձը
աշող անցաւ:

ԽՈՐԱԿԻՐ ԱՆԷՔՍԱՆԻՐ ՔԱՆԱԹԱՐ
Հրատարակիչներ: ԹԱԳՈՒՆԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱԶԱԿ ՄԷԼԻՔ-ԱՂԱՄԱՆԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Բ Յ Շ Ա Կ Պ Ե Տ
ԲՅՇԿ. Բ. Նաւասարդեան
տեղափոխվելով Թիֆլիսից ԲՕՍՏՕՎ
Հիւանդանոցին ընդունում է 11-12 ժ. առ.
և 7-8 ժ. երեկոյան:
Б. Садовая, 136, д. Бакалова.
(п. к. 5.) 37-100

Ա. ԲԱԹԱՆԵԱՆ
(ներքին և ներվայի հիւանդութիւններ)
Ընդունում է հիւանդներին Կովկասեան հան-
քային ջրերում—Պետերբուրգում. Верхний
бундарт, № 14, д. Кн. Гирей. (к. 5.) 20-20

Թիֆլիսի Ժողովարան
Հինգշաբթի, յուլիսի 22-ին, 1904 թ. նշանակ-
ված է երկրորդ ընդհանուր ժողով պ.պ. ան-
դամներից կանգնող առաջարկված անձերի
ընտրութեան և ուրիշ հարցեր վճռելու հա-
մար: (13, 18, 22) 1-3

ԿՐՕՆԻ ԴԱՍՏԳՐԵՐ	
Աւելանալիս համար	
Դասակարգ	Բ. Կ.
1. Դասակարգ կրօնի I տարի	25 250/0
2. » » II »	20
3. » » III »	30
4. Հին-ուխտ (ընդարձակ)	45
5. » (համառոտ)	35
6. Նոր-ուխտ	40
7. Գործը առարկայից	40
Ուսուցչաց համար	
8. Ուղեցրից (մեթոդիկայ) հին- ուխտ	1 75
9. Ուղեցրից (մեթոդիկայ) նոր- ուխտ	2 5
10. Ուսուցչական քրիստոնէա- կան կրօնի Դ.	1 50
11. Ուսուցչական քրիստոնէա- կան կրօնի Ե.	50
Ցանկացողները կարող են գիմնէ հետևել հասցէով:	
1) Тифлисть, священнику С. Оаакянцъ, Ком. мерческое училище.	
2) » Книжный магазинъ «Гуттен- бергъ»	
3) » » «Центральныѣ»	

Դասագրքերին պահանջը ամառս գտնվում
է պ. Ալեքսանդր Ամիրաջեանցի մօտ (Кар-
вансарай Тамашева мануфактурный магазинъ
А. Амрагова).
Ցանկացողները նրանից ևս կարող են պա-
հանջ անել:
Սահակ քահ. Սահակեանց
յ. ա. օ. յլ.—օ. օր.—մէջ ու. ա. օ. 22-66

ԿԱՊՍՈՒԼՆԵՐ ՄԱՏԻԿՈՒ
(Capsules au Matico)
ԳՐԻՄՕ ԵՒ ԸՆԿ. ԴԵՂԱԳՈՐԾՆԵՐԻ
Թոյլ է տրված Ռուսաստանում:

Աղողութեամբ պորձ է ան-
վում հոտորէի բժշկութեան
ժամանակ, երբեք չը յոգ-
նեցնելով ստամոքսը, ինչ-
պէս այդ լինում է, երբ
գործ է անվում Կապսու-
լարումը հեղուկ ձևով:
Парижъ, 8, Rue Vivienne և գլխաւոր
դեղատներում:
(12 և 19) 9-20
Լոյս տեսաւ:
ԳՐԻԳՈՐ ՍՐԾՐՈՒՆՈՒ
ՍԵՆԱՍՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ
Հասց. առաջին. 1865-1871.
Գրին է 1 ՐՈՒՐԻՔԻ.
Առաջին հատորի մէջ զետեղված են այն
խոշոր ու մանր յօդուածները, որոնք լոյս են
տեսել մինչև «Մշակ» լրագրի հրատարակու-
թիւնը: Այդ յօդուածները վերաբերում են
1865-1871 թւականների շրջանին և տպված
են եղել մասամբ «Մեղու Հայաստանի» լրա-
գրում, իսկ մասամբ «Հայկական Աշխարհ»
ամսագրում:
Դիմել «Գրուսսեմբերգ» գրախանութ: 5-25

Կենտրոնական Գրախանութեան վաճառվում են

Սկզբնական Բազար, Աշոտ երկաթ, պատմական վէպ, Թիֆլիս 1904 թ. գ. 1. ր. փառա-
կազմ 1 ր. 50 կ.:
Թորոս վ. Յով. Հ. Ընտիր Հայկազունը, Վենետիկ ու Ղազար 1903 թ. գ. 2 ր. 50 կ., փառ. ր3.:
Միլիթարեան Յորելեան գ. 2 ր. 50 կ.:
Պալատեանս ու Պատմութիւն Հայոց սկզբից մինչև մեր օրերը, Թիֆլիս 1903 թ. գ. 1 ու. 50
կ., փառակազմ 2 ր. և 2 ր. 50 կ.:
Ս. Էլմիադին 303-1903 թ. Վենետիկ. ու Ղազար 1903 թ. գ. 1 ր.:
Սուրենաւեան Գար. եպիսկ., Համով հոտով ա. գ. հեղինակի պատկերով, Թիֆլիս, 1904 թ.
գ. 1 ր. 25 կ., փառակազմ 1 ր. 75 կ.:
Փափուկեան Վ., Ալեքսի, պատմական պարսկերէր կեանքից, Թիֆլիս, 1904 թ. գ. 50 կ.:
» Հայ-բողոք (ազգագրական ուսումնասիրութիւն), 1899 թ. գ. 50 կ.:
» Պատմութեան, Թիֆլիս, 1901 թ. գ. 50 կ.:
» Համա, վէպ ժամանակակից բարքերից, Թիֆլիս, 1901 թ. գ. 1 ր.:
» Մանթօ (հայ բողոքների կեանքից), Թիֆլիս, 1898 թ. գ. 30 կ.:
Սաթուհեան և Ջանուսեան, Ոստիկ—Հայ կանանց ժողովածու, Գ. Ջանուսեանի յիշատակին,
գիրքը ա. 1904 թ. գ. 70 կ.:
Վերոյշեալ գրքերից միտնուաք 10 ր. գնողները քաղաքում 10% զեղջ են ստանում,
գաւառացիք ճանապարհածախս չեն վճարում. վճարը կանխիկ:
Դիմել՝ Тифлисъ, въ Центральную Книжную Торговлю. (Կ.) 1-3

Ֆինանսների նախարարութեան իրաւասութեան տակ գտնվող
ՀԱՂՈՒՆՊԱՆՈՒԹԵԱՆ ԿՈՒՐՍԵՐ
ՆԻԿՈՂԱՅՈՍ ԱՐԱՆՔԱՄԵԱՆԻ
Հեղինակ «Առևտրական, գործարանական և նաւթարդիւնարեւութեան հաշուապահու-
թեան ձեռնարկ», որ ֆինանսների նախարարութեան ուսումնական բաժնի կողմից ընդուն-
ված է իբրեւ օժանդակ ձեռնարկ առևտրական դպրոցներում և նրանց գրադարաններում
ՍՈՎՈՐԵՑՆՈՒՄ ԵՒ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ ԵՆ
Երկու սեռի անձանց՝ գործնական ձևով հաշուապահութիւն 4 1/2 ամսում:
Պատասխանի առարկաներն են.
1) Բաւական կրկնակի հաշուապահութիւն արդիւնագրութեան բոլոր ճիւղերի
վերաբերելով, վաճառականական, բանկային, յանձնարարական, գործարանական, նաւե
նաւթարդիւնարեւական և նաւթարդիւնական հաշուապահութիւն: 2) Առևտրական թուա-
րանութիւն: 3) Առևտրական թղթակցութիւն: 4) Սուրհակային և առևտրական օրէնքներ:
5) Վալյուզգրութիւն և ուղղումն ամսական ձեռագրի: 6) Թուաքանութիւն համարիչի
վրա: 7) Դրելու վարժութիւն «Ընդհանրական» գրելու մեքենայի վրա (կամաւոր):
Կուրսերի համար դասաւանդներ են հրաւիրված համալսարանական կրթութիւնով և
իրանց գործին մասնագէտ մարդիկ, որոնք հաստատվել են իրանց պաշտօնում ֆինանս-
ների նախարարութեան ուսումնական բաժնի կողմից. գեղագրութեան համար ևս հրա-
ւիրված է մի գեղագիր նկարիչ:
Ընդունելութիւն ամեն օր ժամը 5-ից մինչև 7-ը երեկոյան: Պատասխանները
սկսվում են 1904 թ.ի սեպտեմբերի 15-ից պարբերաբար ամեն 4 ամիս, ամենայն
ճաշից յետոյ՝ 60 րոպէի վճարով ամբողջ դասընթացը համար:
Դասընթացը աւարտողներին տրվում են, ֆինանսների նախարարութեան թոյլա-
տրված ծրագրի համաձայն, ատտեստատներ:
Դրանց անկախ, 1904 թ.ի սեպտեմբերի 1-ից կը բացվեն քիչ պատրաստութիւն
ունեցող անձերի համար առանձին լրացուցիչ և կրկնողութեան կուրսեր ուսաց լեզուի
և թուաքանութեան համար:
Ցանկացողներին խնդրում են դիմել գրաւոր կերպով կամ անձամբ կուրսերի հիմնա-
դրի՝ Թիֆլիսում, Н. В. Абрамянъ, Николаевская ул. № 46, ամենայն օր: Մրա-
գրին ուղարկվում է ձրի:
Վերևում յիշված ձեռնարկը ծախվում է Ռուսաստանի բոլոր գրաւաճառանոցնե-
րում: Օտարաքաղաքացիները ֆիլքը գնելու համար կարող են դիմել հեղինակին, առանց
պատի ծախս վճարելու: Դիմել է 3 ր. 50 կոպէկ:
(Կ. 5.) 5-25

ԿՐԿԱՍԵԱՆ ԳԼԽԱՌՐ ԳՈՐԾԱԿԱՆՈՒԹԻՒՆ
Ընկերութեան ԳՐԱՄՄՕՅՈՐ Ռուսաստանում
Թիֆլիս, Գոլովինայի պրօպէկտ, Արեւելիկ աս. № 7.
Հասցէն հեռագրով Թիֆլիս
ԳՐԱՄՄՕԿՈՄՊԱՆԻԱ
Հեռախօս № 69.
ՇԱՏ ՏԵՍԱԿ՝ ամենա-
կատարելագործված սա-
լօնական և կոնցրետային
գրամմօֆոններ:

Մեծ քանակութեամբ՝ անշուկ պատրիկաների յայտնի և նշանաւոր երգիչների, ինչպէս
են.—Ռուսաց, վրաց, հայոց, քրական, պարսկական, ճափական, լեհական, ֆրան-
սիական, անգլիական, իսպանական, գերմանական և ուրիշները:
ՊԱՍՏԻՆԿԱՆԵՐԸ ԸՆՏՐԵԼԻՍ խնդրում ենք ուղարկութիւն դարձնել մեր ֆաբրի-
կայի դրօշմին «Գ Ր Ո Ղ Ը Ե Շ Տ Ա Կ» առանց մեր դրօշմի ընդունել ինչպէս
կեղծված:
Պահեստում կա յ արհեստանոց, որտեղ հարկաւոր եղած ժամանակ կարելի
է նորոգել փչացած ապարատները: Գրամմօֆոնի ուղղի բանելու համար տրվում է ե-
րաշխաւորական թիւթ 3 տարի ժամանակով:
Ուղարկելով ապրանքների արկը և այլ ծախսը գնողներին հաշին:
Ուղարկելով ապարատների կարթնագրութեան բոլոր կայարանները, եւրօպական Ռուսաս-
տանի սահմաններում (ամառը ի հաշիւ առած ջրային ճանապարհների նաւահանգիստ-
ները) կատարվում է պահեստի հաշին:
Պատուով ուղարկած ապրանքները ծախսը, պահեստը ընդունում է իրան հաշին կէսը:
Ածած պլաստիկաները միայն մեր բաց թողած դրօշմով «Գրող-հրեշտակ»
յետ է ընդունվում ներքոյ յիշեալ գներով:
Փոքր սովորական } հատը — 50 կոպ. Մեծ սովորական } հատը 1 ու. 00 կոպ.
» էկտրայ } » էկտրայ } » 1 » — »
Գիգանտ սովորական } հատը 1 ու. 30 կոպ. Տամանիօ } 1 » — »
» էկտրայ }
Կիրակի օրերը խանութը փակ է. հասարակ օրերը բաց 8 1/2 առաւ. մինչև ժամի
9-ը երեկոյան:
Պահանջեք պատկերազարդ պրէսկուրանցներ:
Գրամմօֆոն գնողներին ուղարկվում է Օպէօլի պրէսկուրանները պահանջելուն
պէս: Պահանջեք լրակատար լիւրիտատ գրամմօֆոնի համար, գինը 1 ր. 50 կ.: 42-50